ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» հուլիսի 2011թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N2925-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 9-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 27-ի N2121-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N2925-Ա որոշմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N2925-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հուլիսի 9-ի N2925-Ա որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ստորև նշված հանգամանքներով՝

1. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 30-ի «Երևանի համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքի ռեժիմը և երեխաներին պահելու տևողությունը սահմանելու մասին» N2833-Ա որոշմամբ սահմանված միասնական մոտեցմամբ՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատանքային ռեժիմը սահմանվել է ժամը 8^{00}-ից մինչև 17^{30} -ը, երեխաների պահելու տևողությունը՝ ժամը 8^{30}-ից մինչև 17^{30}-ը, իսկ երեկոյան ժամերին երեխաներին պահելու տևողությունը՝ 17^{30}-ից մինչև 19^{00}-ը: Նախկինում նման ռեժիմներ սահմանված չեն եղել, քանի որ Երևանի նախկին թաղային համայնքների ավագանիների կողմից ցուցաբերվել են տարբեր մոտեցումներ և ըստ առանձին համայնքների սահմանվել են տարբեր աշխատանքային ռեժիմներ:

Վերոհիշյալ փոփոխությունների դեպքում (հաշվի առնելով 1 ժամ ընդմիջման ժամանակը) նախատեսվում է աշխատանքային ժամանակը սահմանել 8 ժամ, իսկ երկարօրյայի դեպքում 39 նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ 9,5 ժամ, որի համար անհրաժեշտություն է առաջանում նախատեսել դաստիարակի կամ դաստիարակի օգնականի լրացուցիչ հաստիքային միավորներ:

2. Ավելացել է մի շարք նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների աշխատավարձի չափերը՝ նախկին 70000 դրամի փոխարեն այն սահմանվել է 75000 դրամ, քանի որ վերոհիշյալ փոփոխությունների արդյունքում դաստիարակների աշխատավարձի չափերը կգերազանցեին տնօրենների աշխատավարձերի չափերին:

3. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակի աճով պայմանավորված՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում բացվել են լրացուցիչ խմբեր, որի արդյունքում նախատեսվում են դաստիարակի և դաստիարակի օգնականի հաստիքային միավորների ավելացումներ:

Հաշվի առնելով, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է երեխաների փաստացի հաճախումների թվով, ուստի նախատեսվում է, որ կատարված փոփոխությունները լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն չեն առաջացնի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N2925-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հուլիսի 9-ի N2925-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N2925-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հուլիսի 9-ի N2925-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ